

Բոլիոյի պատուաստ

Դուք ի՞նչ պետք է իմանաք:

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis.

Պատուաստի վերաբերեալ շատ յայտարարութիւններ կը գտնուին սպաներէտով եւ այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis.

1 Ի՞նչ է բոլիոն:

Մանուկներու անդամալուծութիւնը՝ (Բոլիո) ժահրի միջոցով յառաջացած հիւանդութիւն մըն է, որ մարմին մուտք կը գործէ բերանի միջոցով: Սովորաբար լուրջ հիւանդութիւն մը չէ: Բայց երբեմն կրնայ անդամալուծութիւն (չկարողանալ ձեռքը կամ ոտքը շարժել), ինչպէս նաեւ խելամգատապ (ուղեղաթաղանթի բորբոքում) յառաջացնել: Ան կրնայ վարակուած մարդոց սպաննել՝ սովորաբար անդամալուծելով շնչառութիւնը օգնող մկանները:

Բոլիոն շատ տարածուած էր Միացեալ Նահանգներու մէջ: Ան անդամալուծեց եւ խլեց հազարաւոր մարդոց կէանքը՝ մինչեւ որ մենք պատուաստ ունեցանք:

2 Ինչո՞ւ պատուաստուիլ:

Բոլիոյի տկար պատուաստը՝ (IPV) կրնայ կանխարգիլել անդամալուծութիւնը:

Պատմութիւն. 1916-ին Միացեալ Նահանգներու մէջ բոլիոյի համաճարակը 6000 մարդու կէանքը խլեց եւ անդամալուծեց աւելի քան 27000 հոգի: 1950-ականներու սկիզբին ամէն տարի բոլիոյի պատճառաւ աւելի քան 25000 դէպքեր կը գրանցուէին: Բոլիոյի պատուաստը սկսաւ 1955-ին: 1960 թուականի հաղորդուած դէպքերուն թիւը նուազեցաւ մինչեւ 3000-ի, իսկ 1979 թուականին գրանցուեցաւ ընդամենը 10 դէպքեր: Բոլիոյի պատուաստի յաջողութիւնը Միացեալ Նահանգներու եւ այլ երկիրներու մէջ անդամալուծութեան վարակը վերացնելու համաշխարհային ջանքի սկիզբը հանդիսացաւ:

Այսօր. Բոլիոն վերացած է Միացեալ Նահանգներէն: Մակայն հիւանդութիւնը տակաւին յաճախակի կարելի է հանդիպիլ աշխարհի որոշ մասերուն: Բոլիոյով վարակուած, այլ երկրէն եկող մէկ հոգին բաւարար էր, որ հիւանդութիւնը ետ բերէր այստեղ, եթէ մենք պաշտպանուած չըլլայինք պատուաստով: Եթէ այս հիւանդութիւնը վերացնելու աշխարհի կողմէն ներդրուած ջանքերը յաջողութեամբ արձանագրուին, կու գայ օր մը, երբ մենք այլեւս բոլիոյի պատուաստին պահանջը չենք ունենար:

3 Ո՞վ եւ ե՞րբ պետք է ստանայ բոլիոյի պատուաստը:

IPV-ն կը ներարկուի սրունքի կամ թեւի վրայ՝ տարիքի համաձայն: Կարելի է այլ պատուաստներու հետ միեւնոյն ժամանակ տալ:

Polio VIS (11/8/11) - Armenian

Երախաներ

Երախաները IPV-ի 4 դեղաչափ կը ստանան, հետեւեալ տարիքներուն.

- Մէկ չափաբաժին 2 ամսականին
- Մէկ չափաբաժին 4 ամսականին
- Մէկ չափաբաժին 6-18 ամսականին
- Մէկ չափաբաժին 4-6 տարեկանին

Քանի մը պատուաստի «միացութեամբ» (մի քանի տարբեր պատուաստները միեւնոյն ներարկման մէջ) կը պարունակեն IPV: Այն երախաները, որոնք կը ստանան այս պատուաստները, կրնան բոլիոյի պատուաստը անգամ մը եւս (5-րդ) դեղաչափ ստանալ: Ասիկա խնդիր չէ:

Չափահասներ

18 տարեկան եւ աւելի տարիք ունեցող չափահասներու մեծ մասը բոլիոյի պատուաստի կարիք չունին, որովհետեւ փոքր եղած ժամանակ անոնք պատուաստուել են: Բայց որոշ չափահասներ բարձր վտանգի տակ են եւ պետք է ի նկատի ունենան բոլիոյի պատուաստը.

- (1) մարդիկ, որոնք կը ճամբորդեն աշխարհի այն շրջանները, ուր տարածուած է բոլիոն,
- (2) տարրալուծարան աշխատողները, որոնք կրնան քննել բոլիոյի ժահրը, եւ
- (3) առողջապահական խնամքի բնագաւառէն ներս աշխատողներ, որոնք կը բուժեն բոլիո ունեցող հիւանդներ:

Այս երեք խումբերուն մէջ եղող չափահասները.

- Ովքեր երբեք բոլիոյի պատուաստ չեն ստացած, պետք է IPV-ի 3 դեղաչափ ստանան.
 - Երկու դեղաչափերը 1-էն 2 ամսուայ մէջ բաժնուած, եւ
 - երրորդ դեղաչափը երկրորդը ստանալէն ետք 6-12 ամսուան ընթացքին:
- Ովքեր նախապէս բոլիոյի 1 կամ 2 դեղաչափ ստացել են, պետք է ստանան Գնացեալ 1 կամ 2 դեղաչափը:
 - Կարևոր չէ, թէ նախորդ չափաբաժինէն որքան ժամանակ անցել է:
- Ովքեր նախապէս բոլիոյի 3 կամ աւելի դեղաչափ ստացել են, կրնան IPV-ի պահպանող դեղաչափ ստանալ:

Ձեր բժիշկը կրնայ ձեզի յաւելեալ տեղեկութիւններ փոխանցել:



4 Որոշ մարդիկ պետք չէ IPV ստանան կամ պետք է սպասեն:

Այս մարդիկը պետք չէ IPV ստանան.

- Ուել մեկը որ կեանքին վտանգ սպառնացող զգայություն ունի IPV-ի ցանկացած բաղադրիչի, ներառեալ (neomycin), (streptomycin) կամ (polymyxin B) էնթիպիոթիկի դեմ, պետք չէ բոլորի պատուաստ ստանալ: Ձեր բժիշկին տեղեկ պահեցեք, եթե որոշ տեսակի ծանր զգայության հակազդեցություն ունիք:
- Ուել մեկը որ ծանր զգայության հակազդեցություն ունեցեր է բոլորի նախորդ ներարկման ժամանակ, պետք չէ յաջորդը ստանալ:

Այս մարդիկը պետք է սպասեն.

- Ուել մեկը որ միջին կամ ծանր աստիճանի հիւանդ է ներարկման ժամանակ, բոլորի պատուաստը ստանալէն առաջ պետք է սպասե, մինչեւ որ առողջանայ: Մարդիկ, որոնք թեթեւ հիւանդություն ունին, ինչպէս օրինակ՝ հարբուխը, կրնան պատուաստ ստանալ:

Ձեր բժիշկին հարցուցէ՛ք յաւելեալ տեղեկություններ ստանալու համար:

5 Որո՞նք են IPV-ի վտանգները:

Որոշ մարդիկ, որոնք IPV կը ստանան, ներարկման տեղը ցաւոտ բշտիկ կունենան: IPV-էն յառաջացած լուրջ խնդիրներ յայտնի չեն եւ մարդոց մեծ մասը առհասարակ որեւէ խնդիր չեն ունենար զայն ստանալէ:

Սակայն, որեւէ դեղամիջոց կրնայ լուրջ կողմնակի ազդեցություն ունենալ, ինչպիսին է ծանր զգայության հակազդեցությունը կամ նոյնիսկ մահը: Բոլորի պատուաստը լուրջ վտանգ սպառնելու վտանգը չափազանց փոքր է:

6 Ի՞նչ ընել, եթէ կայ միջին կամ ծանր աստիճանի խնդիր:

Փնտռեցեք որեւէ անսովոր վիճակ, ինչպիսիք են լուրջ զգայության հակազդեցությունը, բարձր ջերմությունը կամ ոչ սովորական վարքը:

Եթէ լուրջ զգայության հակազդեցություն յառաջանայ, ուստի ան ի յայտ կու գայ ներարկումէն քանի մը վայրկեան վերջ մինչեւ մէկ ժամուան ընթացքին: Ծանր զգայության հակազդեցության նշանները կրնան ներառել շնչելու դժուարություն, թուլություն, խոպոտություն կամ խզխզոցով ծանր շնչառություն, սրտի արագ բարբախում, եղնջատեւնդ, գլխապտոյտ, գունատություն կամ կոկորդի այտուցուածություն:

Ես ի՞նչ պետք է ընեմ:

Բժիշկ կանչեցէ՛ք կամ հիւանդը անմիջապէս բժիշկի տարէ՛ք:

Ձեր բժիշկին պատմեցէ՛ք, թէ ի՞նչ պատահած է, նշեցէ՛ք ամիսը, ժամը եւ այն, թէ ե՛րբ տրուած է պատուաստը:

Ձեր բժիշկին խնդրեցէ՛ք որ հակազդեցութեան մասին խօսի՝ տեղեկացնելով պատուաստի բացասական դէպքերու զեկուցման համակարգի (VAERS) ձեւաթուղթը:

Կամ դուք կրնաք այս զեկույցը ներկայացնել VAERS-ի կայքէջի միջոցաւ՝ www.vaers.hhs.gov կամ հեռաձայնել հետեւեալ թիւով՝ **1-800-822-7967** :

VAERS բժշկական խորհրդատուութիւն չի տրամադրեր:

7 Պատուաստէն ստացած վստահութի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատուաստէն ստացած վստահութի փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) ստեղծուեցաւ 1986-ին:

Մարդիկ, որոնք վստահ են, որ իրենք վստահութի են պատուաստի պատճառով, ծրագրի մասին կրնան տեղեկանալ եւ հայց ներկայացնել՝ հեռաձայնելով հետեւեալ թիւով՝ **1-800-338-2382**, կամ այցելել հետեւեալ կայքէջը՝ www.hrsa.gov/vaccinecompensation:

8 Ի՞նչպէս կրնամ աւելին իմանալ:

- Զարցուցէ՛ք ձեր բժիշկին: Անոնք կրնան ձեզ տալ փաթեթին ներդիրը կամ առաջարկել տեղեկատուութեան այլ աղբիւրներ:
- Հեռաձայնեցէ՛ք ձեր տեղական կամ նահանգային առողջապահութեան վարչութիւն:
- Կապի մէջ եղէք հիւանդութեան վերահսկման եւ կանխարգիւման կեդրոնի (CDC) հետ.
 - Հեռաձայնեցէ՛ք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** թիւով, կամ այցելեցէ՛ք CDC-ի կայքէջը՝ www.cdc.gov/vaccines :

Vaccine Information Statement (Interim)

Polio Vaccine

Armenian

11/8/2011

42 U.S.C. § 300aa-26

Translation provided by the California Department of Public Health